

**Տ. ՎԱՐԴԱՆ ԱԲԵՂԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՅ ՏՈՆԻՆ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԱՅՐ ՏԱԾԱՐԻ ԶԱՆԳԱԿԱՏԱՅ ԽՈՐԱՎՆԻՑ**

(8 նոյեմբերի 2003 թ.)

«Յանուն Նօր և Որդոյ և Նոգոյն Սրբոյ. ամէն»:

Ճափ սիրելի ներկաներ և ուխտավոր հայորդիք այսօրվա հրաշաբաշխ այս դոնի մասնակից:

Այսօր այս խորհրդաշաբ և յուրահապուկ Սուրբ Պատրարազի միջոցով, երկրի վրա երկինք խորհրդանշող այս Սուրբ Եկեղեցին, որը 1700 տարիներ սրբվել և յուրաքանչյուրին նման մեր նախնյաց աղոթքով մաքրվել է ներկայությամբ և, ինչու չէ, սրբատորք այս Տաճարի յուրաքանչյուր կենդանի քարի կենդանացումով ու զորությամբ, կենդանացնում և զորացնում է մեզ այսօր: Լավ զիվեք, որ միշտ չէ, որ հավաքացյալը գալիս է Ս. Պատրարազի և իրեն երևելի չի ինում այն: Սակայն եթե առավել անկեղծանանք՝ այս էլ իր յուրահապուկ խորհուրդն ունի, որ փարփառ մեջ միայն այս օրը, այս դոնին, Ս. Պատրարազը հրեշտակների նման անփեսանելի է, խորհրդավոր և միևնույն ժամանակ շնորհաշաբ և այսափ բարեխոսական և միջնորդական է:

Այսօր, սիրելիք, երկինք ու երկիր միավորվելով՝ հոգով և ճշմարփապես երկրապազում ենք անեղ Ասպծուն, Արարքին երկնի և երկրի՝ ասելով. «Փառք ի բարձունս Ասպոծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. Բ 14): Եվ այսօր Ս. Գաբրիել և Ս. Միքայել երեշտակապետների և իրենց փառաբանակից երկնային զորաց հիշաբակությունն է փոնախմրում մեր Մայր Եկեղեցին, երեշտակներին և սրբերին դիմելով՝ ինդրում է իրենց հաղթանակած բարեխոսությունը մարդուն երիս համար, քանզի նրանք երկրի վրա պայքարի իրքն արդյունք հաղթել են աներևույթ թշնամուն և իրենց արդարությամբ և մաքուր կենցաղավարությամբ միավորվել Ասպոծո հետ՝ սրանձնելով Ասպծո առաջ մեր միջնորդությունը:

Երեշտակներն առավել լինելով Ասպծո անդրանիկ սրբասաց փառաբանող բանակներ՝ վանեցին բանսարկու և բոլոր չար երեշտակներին, ովքեր Ասպծո կամքին հակառակվեցին, և բարու ու լույսի այս բանակներն իրենց հենազանդությամբ, առաքինի քաջությամբ ու սրբությամբ, անարյուն իրենց մարդիրուսությամբ ասպվածային շնորհներով առափացան և փառքով պսակվեցին Արքայության մեջ անմահ Արքայի հետ միասին:

Նրանք եղան նաև մարդկության պահապանները և առաջնորդները երկնային հավիպենության, նրանք եղան մարդկության փրկության ավելախոսներն Ասպծածամոր անձի միջոցով և Ասպծո բոլոր պատգամների հաղորդակիցներ, մեր անդրանիկ եղայրներ, որ կոչվեցին նաև դասը անդրանկաց: Եղան ոչ միայն մեզ Ասպծո կամքը հայփնողներ, այլև մարդու և Ասպծո միջնորդ և հաշտարար՝ մեր իսկ փրկությանը հետամուր:

Ասլոված, սիրելիներ, ի սկզբան անդի յուրաքանչյոր մարդու մի պահապան հրեշտակէ կարգել մեր մշտական զգապության համար, քանզի կամենում է, որ «ի գիրութիւն ճշշմարդութեան եկեսցեմք»:

Սիրելիներ, այսօր, այս խորհրդաշապ պահին, եկեր միասին աղոթքով միավորվենք և Տիրոջից Իր խաղաղության հրեշտակին հայցենք յուրաքանչյորիս համար, որպեսզի զայով մեր յուրաքանչյորիս պահապան այդ հրեշտակը, պահի ու պահպանի մեզ անխռով ու անվրդով, առաջնորդի մեզ Արքայության ճշմարիկ և սրբացնող ճանապարհով դեպի անեղ, անմահ Արարիչ Ասլոված, և միասին աղոթքով միանանք՝ ասելով. «Որ անդադար օրինաքանիս ի դասուց հոգեղինաց երկնաւոր զուարթնոցն, արժանաւորեայ զմեզ ուղիղ փառաքրութեամբ ընդ սուրբ Քոյ երկրապագել մեծի և ահաւոր գլուխեանդ Քոյ յափանան յափենից»:

«Ճնորհք, սէր, խաղաղութիւն Տեսոն մերոյ Յիսոսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամեննեսեանս ամեն»: